

## Արձանագրություն հ. 2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի

22. 03.17 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 31-ը:

Օրակարգում՝

1. Գիտական զեկուցում <<Բանկային խմբերում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման մեթոդաբանական հիմնախնդիրները>> (զեկուցող՝ դոցենտ Հ.Զաքոյան)
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
3. Պրոֆեսորի գիտական կոչում ստանալու երաշխավորություն:
4. Նոր ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատում
5. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցը գիտական զեկուցում էր վերոնշյալ վերնագրով /զեկուցումը կցվում է արձանագրության թղթային տարբերակին/:

Երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների թեմաները և գիտական ղեկավարներին:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների թեմաների և գիտական ղեկավարների վերաբերյալ (քաղվածքներն ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին):

Երրորդ հարցը վերաբերվում էր պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար երաշխավորություն տալուն: Հավակնորդների անձնական տվյալների և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշման մասին զեկուցեց մրցութային հանձնաժողովի անդամ Ա.Կարապետյանը: Նա ասաց, որ մրցութային հանձնաժողովը երաշխավորում է 3 հավակնորդներին մասնակցելու գիտխորհրդի քննարկմանը:

Որոշեցին պրոֆեսորի գիտական կոչում ստանալու 3 հավակնորդներին էլ թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Կ.Զուրաբյան /նախագահ/, Թ.Թորոսյան, Ռ.Ալավերդյան,

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քվեարկության արդյունքների վերաբերյալ: Դրանք հետևյալն են. քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից նիստին ներկա գտնվող 31-ը:

Գևորգյան Ռ.Ա - կողմ՝ 31, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա

Համբարձումյան Ա.Հ. – կողմ՝ 30, դեմ չկա, անվավեր քվեաթերթ՝ 1

Մնացականյան Հ.Գ. - կողմ՝ 31, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա

Որոշեցին հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

Որոշեցին նկատի ունենալով քվեարկության արդյունքները, ամբիոնների և մրցութային հանձնաժողովի որոշումները, պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար դիմած 3-ին էլ երաշխավորել ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

Չորրորդ հարցը վերաբերվում էր նոր ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատմանը:

Որոշեցին հաստատել:

Ընթացիկ հարցերի շրջանակում որոշեցին .

1.Տալ ատենախոսությունների ղեկավարման երաշխավորություն Մ.Եղիազարյանին և Ա.Մ.արտիքոսյանին:

2. Ս.Ղանթարջյանի աշխատանքը երաշխավորել տպագրության որպես ուսումնական ձեռնարկ:

Ֆակուլտետի գիտխորհրդի  
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի  
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան